

Ն.ՆԱԶԱՐՅԱՆ

ՄՈՇԱԿՆԵՐԻ



ԴԱՐՍԱՆԻՔԸ

ՊԵՏՉՐԱՏ

891.995  
Հ-15

891.99.5  
Հ-15

Ն. ՆԱԶԱՐՅԱՆ

3<sup>rd</sup> MAY 2011

Մ

## ՄՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Նկորները  
Բ. Մեսրոպյանի

ԹԵՏՐԱԿԱՆ  
ՀԱԿԱՎԱԾ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՍՏԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1938



Պլումբեռս և հերկանուս,  
Կուկես,  
Այդես, —  
Յեկան հանդես:

Եսպես խումբ-խումբ, տղտղալով,  
Հայ յերգելով, հա բզզալով,—  
Հավաքվեցին մի տաք անկյուն,  
Ժողով արին զիշերն անքուն:


Առաջ յեկավ մայր մոծակը,  
Մի բարձ դրին նրա տակը,  
Փափուկ բարձին մայրը թիկնեց,  
Հանգիստ ձայնով եսպես խոսեց.

— Մտիկ արեք, իմ մոծակներ,  
Ի՞նչ ե ասում մայրիկը ձեր.  
Նոր եք թուել գուքես ջրից,  
Համբավ չունեք գեռ աշխարհից:

Դուք բոլորդ, այս որից յետ,  
Պիտի կապվեք մարդկության հետ:  
Բայց դուք գիտեք՝ հեշտ բան ե, վոր  
Զագ պաշտպանենք տարին բոլոր:  
Այս ճահճի մեջ  
Տանջվել անվերջ,  
Յավ ենք քաշել,  
Կյանք ենք մաշել,  
Վերջը մի կերպ հասել հացի...

Մեկ ել նրան, մի զիլ քացի...  
— Հիմար, գոչեց քացի տվող  
Խենթ մոծակը տղտղացող—  
Հավաքել ես գեղ-գեղովին,  
Ինչ ե, լսենք քո ժողովին,  
Ազատ կյանք եմ յես ցանկանում  
Քո ուժիմին չեմ յենթարկվում:

Վրա տվին ամեն կողմից  
 Մայր մոծակին մի անգամից:  
 Խեղճը ահից  
 Թռավ գահից:  
 — Ել չեմ ուզում զլուխ պատռել,  
 Հիմարներիդ կարգի բերել:  
 — Ել հիմի մեզ մայրը պետք չի,  
 Քացով տվեք, թող գեն կորչի:  
 Մի նոր մոծակ վրա հասավ,  
 Չայն խնդրելով այսպես ասավ.  
 — Մի զես նայիր, ընկեր Այդես,  
 Ի՞նչ եք խոսում, անխելք, այդպես,  
 Յերբ գա աշուն՝ գոմը կերթանք  
 Ու կզրենք հրավիրանք  
 Կզա գեղը—  
 Մեր վողջ ցեղը:  
 Յերբ կունենաք հագուստ ու գույք,  
 Մենք կկազմենք մի մեծ խնձույք,  
 Յոթը գիշեր, յոթը ցերեկ  
 Կասենք. «Տղերք, կերեք, խմեք»:  
 Ահա այսպես հարսանիքով  
 Հարս կբերենք զյուղի կարգով:  
 — Կեցցենս, կեցցենս մեր փեսացու,  
 Չայնեց մոծակ մի տիրացու,  
 — Դե, բոլորս յեկեք յերգենք,  
 Սրան մի լավ գովաբանենք:  
 Ու շարվեցին մոծակները,  
 Մոտեցրին կնձիթները,  
 Շատ տղղացին, տղտղացին,  
 Թռան դեպի գոմ գնացին:



Գոմը չոր եր, տավար չկար՝  
 Դաշտում եյին կովն ու վոշխար,  
 Մոծակները հավաքվեցին,  
 Հարսանիքի տեղ ընտրեցին:

Մին ել, ըհը՝, գոմի տերը,  
 Բոնած թոռան փափիլիկ ձեռը,  
 Գոմը մտավ, վոր հավերի  
 Որվա ածած ձուն հավաքի:  
 Մոծակները շշնջացին,  
 Տզտղացին ու խնդացին:  
 Յեվ նրանցից մինը վազեց  
 Կուզ պառավի քթից բռնեց:

— Տը՝ զզ...

— Պը՝ զզ...

Իր կնճիթով սուր ու խայթող  
 Խեղճ պառավին պատճառեց դող:  
 Պառավն շտապ գոմից թռավ,  
 Չու, հավ ու թառ վողջ մոռացավ,  
 Զեռքը տարավ քիթը քորեց.  
 — Անտեր մնաս, ուֆ, ուֆ, — ասեց:  
 Մոծակները ծափ տվեցին,  
 Խմբով գոմից դուրս ցատկեցին:


Ահա այսպես ամառը վողջ  
 Թուվուացին ժիր ու անխոնջ,  
 Մարդ կծեցին,  
 Վարակեցին:  
 Վորը մնուավ,  
 Վորը թռավ,  
 Վորն ել սատկեց նեխած ճահճում —  
 Են սրսկած թունոտ մահճում:

Բայց տաքերը շուտով անցան,  
 Ծառ ու ծաղիկ վտիտ դարձան,  
 Մոծակները ցրտահարված,  
 Անփույթ չարքով յերամ կապած՝  
 Թռան դեպի գոմերը տաք,



Յեվ սկսվեց խաղ ու կատակ:

Մեր փեսացուն տեղից ցատկեց,  
 — Պսակվում եմ, — հայտարարեց:  
 — Այ, շատ բարի, ինչ եմ ասել,  
 Հարսանիքիդ վախտն ե հասել:  
 Դեհ, վեր կացեք  
 Գինի բերեք:  
 Յեվ դուրս յեկան մոծակները,



Նախ՝ զբեցին հրավերը,  
Առան կացին  
Յեղ մոլթեցին,  
Գինի առան,  
Աշուղ դարձան...  
Մեկ թռչում են, մեկ տղտղում,  
Ծափ են տալիս, առաջ վագում:

Կազմել եյին մոծակների  
Մի մեծ համերգ հրաշալի:  
Ու կանչեցին հարևանին,  
Ծանոթ, ընկեր, բարեկամին:  
Հավաքվեցին մժեղ, մլակ,  
Բլոճ, մրջյուն, ամեն տեսակ:  
Բերին նաև

Ընտիր պարզե՞ւ  
Հարսանքավորը —  
Տիզքավորը,  
Սարդ-խնամին,  
Բզեղ ամին:  
Յեկ միալար նվազներով,  
Ճամբա ընկան զիւ յերգերով:  
Պար են բոնել՝  
Ահել ջահել  
Խաղում, խնդում,  
Մինչև հասան զոքանչի տուն:  
— Ուռա, ուռա, — գոռում եյին  
Ամեն կողմից տղա ու կին...  
— Խմբնք յերկու ծաղկի կենաց,  
Արժանացան նրանք միմյանց...

Մոտ յերեք որ հարսի անում  
Կատարեցին լավ կեր ու խում,  
Վերջը հարբած  
Ու տաքացած  
Հարսին առան ու տուն դարձան:  
Հենց վոր հասան, թռան տեղից՝  
Սարդ ու բզեղ, դուռ ու դրկից:  
— Կարգ ալաշտպանիր, բզեղ քեռի,  
Բլոճ պապին պիտի պարի:  
— Խնամի սարդ, ինչ նվազեմ:  
— Ներեք, տղերք, յես հոգնած եմ:  
Յեկ ամենքից հետո ասին —  
— Հերթը հասավ հարսն ու փեսին:



Քողով հարսը պարն սկսեց,  
Մի մարդ գոմի դուռը բացեց,  
Կամաց-կամաց յեկավ առաջ,  
Նոր գործիքներ ձեռքին բռնած,  
Պինդ փակվեցին գուռ լուսամուտ,  
Գոմը պատեց անթափանց մութ:



Անձանոթը լուցկին վառեց,  
Յեվ ծծումբը բոցավառվեց:  
Գոմը զարձավ ծխի բազնիք,  
Ու խառնվեցին տղամարդիկ:  
Յեվ լսկում ե իրարանցում,  
Թշպրտում են թունոտ բոցում,  
Տղղում, ճչում,  
Իրար կանչում:

Պատ խմբագիր՝ Մ Կըտիչ Կորյուն  
Տելու խմբագիր՝ Ան Գասպարյան  
Սրբագրիչ՝ Թ. Հովհակիմյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Գ. Հակոբյան

Սակայն ով ե լսում նրանց,  
Բզկտում են արդեն միմյանց:  
Յեվ հալածված, սաստիկ շշմած,  
Գորշ ծխին են նայում ապշած:  
— Փեսա, փեսա,  
Մի ինձ ասա  
Կինդ ուր ե,  
Կենդանի՞ յե:

— Ա՛խ, սև լիներ եսպես հարսնիք,  
Ես ի՞նչ որի մեզ հասցըրիք:  
— Յեղբայր, պրծավ մեր լավ որը,  
Թշնամի յեն մեզ բոլորը,  
Ել վոնց անենք  
Ում աղերսենք...  
— Վոր ասացի՞ զգուշ կացեք,  
Զլսեցիք. զեհ սատկեցեք:  
Յեվ մահաբոթ ծխին հլու,  
Կոտորվեցին մոծակ ու լու:




Քլավլիտի լիտոգր Կ 4716. Հրատ. 4380.  
Պատվիր 25. Տիրաժ 5000.  
Թուղթ 62×94. Տպագր. 1 մամ.  
Մեկ մամ. 253±4 սիշ. Հեղին. 0,6 մամ.  
Հանձնված է արտադրության 2 հունվարի 38թ.  
Ստորագրված է տպագրության 4 հունվարի 38թ.  
Գինը 70 կող.  
Պետքարտի տպարան, Յերևան, Խենինի փող. 65



140

11698

ԳԻՒԾ 70 ԿՈԴ



Н. НАЗАРЯН  
С ВАДЬБА КОМАРОВ  
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН 1938